«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«22» մայիսի 2015թ.

Հաստատում եմ

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետի ժամանակավոր պաշտոնակատար

_____ Հ. Թունյան

ԳԲԽ-13/15 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Բիդեք» ՍՊԸ-ի 06.05.2015թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Բիդեք» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Բիդեք» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 06.05.2015թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ 2015թ. ապրիլի 27-ին ժամը 09:30-ի «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 1 արձանագրության 1.4 ենթակետում նշվել է, որ «Բիդեք» ՍՊԸ-ի փաստաթղթերում «Մասնագիտական փորձառություն» չափանիշը պահպանված չէ:

Ընկերությունը տեղեկացրել է, որ «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ բաց ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 2.2.4 կետի պահանջը խախտված է, քանի որ թիվ 3.2 հավելվածում պետք է լրացվեր, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման /նմանատիպ/ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը /պայմանագրերը/ գնահատվում է /գնահատվում են/ նմանատիպ, եթե այն բնակելի, հասարակական, արտադրական և էներգետիկ ոլորտում շինարարական աշխատանքների իրականացման պայմանագիր է, որը «Բիդեք» ՍՊԸ-ի մոտ չի պահպանվել:

Ըստ «Բիդեք» ՍՊԸ-ի՝ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նշված պատճառաբանությունները անհիմն են և իրականությանը չեն համապատասխանում, քանի որ Ընկերությունը սահմանված ձևով ներկայացրել է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման /նմանատիպ/ երկու պայմանագիր, ինչպես նաև ներկայացրել է բնակելի, հասարակական, արտադրական և էներգետիկ ոլորտում շինարարական աշխատանքների իրականացման համար պահանջվող լիցենզիաների պատճենները, ինչպես նաև պատշաճ ձևով ներկայացրել է թիվ 3.1 և թիվ 3.2 հավելվածներով պահանջված տեղեկանքը և հայտարարությունը:

Ընկերությունը գտնում է, որ «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Բիդեք» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը կայացրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով նախատեսված պահանջների խախտմամբ:

«Բիդեք» ՍՊԸ-ն խնդրել է անվավեր ճանաչել «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 1 արձանագրությունը՝ «Բիդեք» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասով:

2. «Երևանի պետական համալսարան» Հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

«Բիդեք» ՍՊԸ-ի 06.05.2015թ. ներկայացրած բողոքի վերաբերյալ «Երևանի պետական համալսարան» Հիմնադրամը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 12.05.2015թ.

գրությամբ հայտնել է, որ անհիմն է համարում «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. ապրիլի 27-ի թիվ 1 արձանագրությունը անվավեր ճանաչելու պահանջի մասին «Բիդեք» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված է, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է նույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Պատվիրատուն հայտնել է, որ «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գտել է, որ «Բիդեք» ՍՊԸ-ի «Մասնագիտական փորձառություն» չափանիշը պահպանված չէ, «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ բաց ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 2.2.4 կետի պահանջը խախտված է, քանի որ թիվ 3.2 հավելվածում պետք է լրացվեր, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման /նմանատիպ/ առնվազն մեկ պայմանագիր, իսկ «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ նախկինում կատարված պայմանագիրը /պայմանագրերը/ գնահատվում է /գնահատվում են/ նմանատիպ, եթե այն բնակելի, հասարակական, արտադրական և էներգետիկ ոլորտում շինարարական աշխատանքների իրականացման պայմանագիր է, որը Ընկերության մոտ չի պահպանվել: «Բիդեք» ՍՊԸ-ի կողմից որպես նմանատիպ ներկայացված պայմանագիրը, որով Ընկերությունը մեկ պայմանագրի շրջանակներում պետք է ապահովեր գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացրած գնային առաջարկի երեսուն տոկոսը՝ չի հանդիսանում բնակելի, հասարակական, արտադրական և էներգետիկ ոլորտում շինարարական աշխատանքների իրականացման պայմանագիր:

Պատվիրատուն հայտնել է, որ «Բիդեք» ՍՊԸ-ն թիվ 3.1 հավելվածում ներկայացրել է տանիքի, ջրամատակարարման, կոյուղու և ջեռուցման համակարգի վերանորոգման աշխատանքների պայմանագիր, որից պարզ երևում է, որ այն չի հանդիսանում բնակելի, հասարակական, արտադրական ոլորտի շինարարության պայմանագիր:

«Երևանի պետական համալսարան» Հիմնադրամը գտնում է, որ «Բիդեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է, քանի որ Պատվիրատուն հետևել է օրենքի պահանջներին և գործել է օրենքով սահմանված կարգով:

3. ԳԲԽ-13/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-13/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի պետական համալսարան» Հիմնադրամի կարիքների համար շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով 2015թ. մարտի 18-ին հայտարարվել է «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.3 կետով սահմանվել են հետևյալ պահանջները.

Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

- մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը,

- մասնագիտական փորձառություն:

«Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ մասնակիցը հայտով ներկայացնում է նախկինում կատարված պայմանագրերի առարկան, ծավալը՝ գումարային արտահայտությամբ (ՀՀ դրամ), պատվիրատուի և նրա հետ կապ հաստատելու տվյալները:

Մասնակիցը համարվում է նշված պահանջին բավարարող, եթե հայտով ներկայացնում է պահանջվող տեղեկությունները և հայտարարություն (հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում վերջինս պատշաճ ձևով իրականացրել է գնման առարկա հանդիսացող կամ համանման /նմանատիպ/ աշխատանքների կատարման գործարքներ՝ նախկինում կատարված պայմանագրեր: **Նմանատիպ են համարվում բնակելի, հասարակական, արտադրական և էներգետիկ ոլորտում շինարարական աշխատանքների իրակա-նացումը:**

«Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (հավելված 3.2), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե երեք հարյուր հիսուն միլիոն դրամից մինչև մեկ միլիարդ դրամ նախահաշվային արժեք ունեցող գնումների դեպքում, դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի երեսուն տոկոսից:

Նմանատիպ են համարվում բնակելի, հասարակական, արտադրական և էներգետիկ ոլորտում շինարարական աշխատանքների իրականացումը:

Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (կամ պայմանագրերի) պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

3. «Երևանի պետական համալսարան» Հիմնադրամի կարիքների համար շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով 2015թ. մարտի 18-ին հայտարարված «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Բիդեք» ՍՊԸ-ն, որի գնային առաջարկը կազմում է 262 325 138 ՀՀ դրամ:

4. «Բիդեք» ՍՊԸ-ն, որպես նախկինում կատարված համանման պայմանագրեր, ներկայացրել է «Հայաստանի երիտասարդական» հիմնադրամի և Ընկերության միջև 2013թ. դեկտեմբերի 24-ին կնքված կապալային աշխատանքների (տանիքի, ջրամատակարարման, կոյուղու և ջեռուցման համակարգի վերանորոգման աշխատանքներ) գնման թիվ «ՀԵՀ-ԲԸՀԱՇՁԲ-13/1» պայմանագիրը (պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 135 954 997 ՀՀ դրամ) և Երևանի քաղաքապետարանի ու Ընկերության միջև 2013թ. հունիսի 1-ին կնքված կապալային աշխատանքների (տանիքի, սանհանգույցների վերանորոգման, պատուհանների և դռների փոխման աշխատանքներ) գնման թիվ «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-13/79-1» պայմանագիրը (պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 46 332 000ՀՀ դրամ):

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.04.2015թ. ժամը 09:30-ին կայացած նիստի թիվ 1 արձանագրության 1-ին կետի 1.4 ենթակետի համաձայն՝ «Բիդեք» ՍՊԸ-ի «Մասնագիտական փորձառություն» չափանիշը պահպանված չէ, «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ բաց ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 2.2.4 կետի պահանջը խախտված է, քանի որ թիվ 3.2 հավելվածում պետք է լրացվեր, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման /նմանատիպ/ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը /պայմանագրերը/ գնահատվում է /գնահատվում են/ նմանատիպ, եթե այն բնակելի, հասարակական, արտադրական և էներգետիկ ոլորտում շինարարական աշխատանքների իրականացման պայմանագիր է, որը Ընկերության մոտ չի պահպանվել:

6. «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝

Օրենք) 31-րդ հոդվածը, որոշում է կայացրել «Կամարաշար», «Թի. Ջի. Ստրոյ», «Բիդեք», ՍՊ ընկերությունների, Ա/Ձ Սմբատ Հայրապետյանի, «ՆԻԿԴԱՎ ԳՐՈՒՊ», «Ագարակ» ԲԲ ընկերությունների և «Եղվարդշին» ԲԲԸ-ի ու «Տրանսունիվերսալ» ՓԲԸ Հ/Ձ-ի /կոնսորցիում/ կողմից ներկայացված հայտերը մերժել, իսկ «Հուտիտ» ՍՊԸ-ին խնդրել է 30.04.2015թ. ներկայացնել համապատասխան փաստաթղթեր՝ որակավորման չափանիշների համապատասխանությունը ստուգելու նպատակով:

7. Պատվիրատուի 12.05.2015թ. գրության համաձայն՝ Բիդեք» ՍՊԸ-ի կողմից թիվ 3.1 հավելվածում ներկայացրված տանիքի, ջրամատակարարման, կոյուղու և ջեռուցման համակարգի վերանորոգման աշխատանքների պայմանագիրը չի հանդիսանում բնակելի, հասարակական, արտադրական ոլորտի շինարարության պայմանագիր:

<u>4. ԳԲԽ-10/15 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Բիդեք» ՍՊԸ-ի 06.05.2015թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «Երևանի պետական համալսարան» Հիմնադրամի 12.05.2015թ. գրությունը, «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.04.2015թ. ժամը 09:30-ին կայացած նիստի թիվ 1 արձանագրությունը, ՀՀ կառավարության 02.02.2002թ. «Հայաստանի Հանրապետությունում շինարարության թույլտվության և քանդման թույլտվության կարգը հաստատելու մասին» N 91 որոշումը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (մինչև ՀՀ կառավարության 30.01.2015թ. 105-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների խմբագրությամբ,

այսուհետ նաև՝ Կարգ) 81-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության, նույն կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի համաձայն՝ մասնակիցների, Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե երեք հարյուր հիսուն միլիոն դրամից մինչև մեկ միլիարդ դրամ նախահաշվային արժեք ունեցող գնումների դեպքում, դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի երեսուն տոկոսից:

2) առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը՝ որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (կամ պայմանագրերի) պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի (կամ պայմանագրերի) կողմերի հաստատած՝ պայմանագրի (կամ պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի (կամ պայմանագրերի) կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Կարգի 85-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են գնման կամ նախաորակավորման հայտա-

րարությամբ կամ հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:

ՀՀ կառավարության 02.07.2009թ. «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման (բացառությամբ շինարարության թույլատվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզավորման ձևը հաստատելու մասին» N 777 որոշմամբ հաստատվել է «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման (բացառությամբ շինարարության թույլատվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզավորման կարգը (N 777 որոշման 1-ին հավելված), որի 6-րդ կետի համաձայն՝ լիցենզիայի ներդիրները տրամադրվում են ըստ հետևյալ ոլորտների՝

1) բնակելի, հասարակական և արտադրական.

2) տրանսպորտային.

3) հիդրոտեխնիկական.

4) էներգետիկ.

5) կապի:

Նույն կարգի 8-րդ կետի համաձայն՝ շինարարության իրականացման գործունեության լիցենզիա ստացած անձինք կարող են գործունեություն իրականացնել սույն կարգի 6-րդ կետով սահմանված ոլորտներից որևէ մեկում կամ ոլորտներում, եթե լիցենզավորող մարմնի կողմից ստացել են համապատասխան ոլորտի (ոլորտների) աշխատանքներ իրականացնող պատասխանատու անձի (անձանց) լիցենզիայի ներդիր (ներդիրներ), ինչպես նաև օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում շինարարության թույլտվության և քանդման թույլտվության կարգը հաստատելու մասին» N 91 որոշման N 3 հավելվածով սահմանված դեպքերում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 2-ի «Քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողության (բացառությամբ

շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N 775-Ն որոշմամբ հաստատված կարգի 9.1-ին և 9.2-րդ կետերին համապատասխան կնքել երաշխավորության պայմանագիր (այսուհետ՝ երաշխավորության պայմանագիր)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության, հաստատված նախագծի և նորմա-տիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին շինարարական աշխատանքների համապատասխանության վերաբերյալ:

ՀՀ կառավարության 02.02.2002թ. «Հայաստանի Հանրապետությունում շինարարության թույլտվության և քանդման թույլտվության կարգը հաստատելու մասին» N 91 որոշմամբ հաստատվել է «ՀՀ շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման, տարածքների բարեկարգման և այլ ցածր ռիսկայնության աստիճանի դասակարգում ունեցող օբյեկտների (շինարարական աշխատանքների), որոնց կատարման համար շինարարության թույլտվություն չի պահանջվում» ցանկը (N 91 որոշման 2-րդ հավելված): Վերոհիշյալ ցանկի «Ընթացիկ նորոգման աշխատանքներ» բաժնի «Շենքեր» ենթաբաժնում սահմանված են շենքերի (բնակելի, հասարակական, արտադրական նշանակության) շինարարական աշխատանքների մի քանի խումբ, այդ թվում նաև շենքերի կտուրների և ծածկերի հետ կապված աշխատանքներ (4-րդ խումբ): Մասնավորապես, «Շենքեր» ենթաբաժնի 4-րդ կետի համաձայն՝ շենքերի ընթացիկ նորոգման աշխատանքների ցանկով կտուրների և ծածկերի աշխատանքների մեջ ներառված են՝ ծպեղագերանների սարքերի ուժեղացում՝ տախտակի կտորներով կամ այլ լրացուցիչ ամրակապերով, կտուրների փայտյա կոնստրուկցիաների ամրացում՝ կցանումների, ծայրակցվածների և այլ միացումների թուլացած տեղերում լրացուցիչ հեղույսների և երկաթակապերի տեղադրմամբ, ծածկերի փայտյա ֆերմաների հեղույսների ձգում, փայտյա կոնստրուկցիաների հակասեպտիկ և հակահրդեհային ծածկապատումներ, կղմինդրե և այլ հատասալիկներից հավաքվող ծածկերի նորոգում՝ առանձին կղմինդրների ու սալիկների փոխմամբ, ներքին ջրատարների ձագարա-փոսերի և վրադիրների նորոգում և այլն:

«Բիդեք» ՍՊԸ-ի կողմից բողոքին կից ներկայացված 01.06.2013թ. կապալային աշխատանքների կատարման գնման թիվ «ՀԵՀ-ԲԸՀԱՇՁԲ-13/1» պայմանագրերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Ընկերության կողմից իրականացվել են Ծաղկաձորի (Սպորտբազա 3-րդ մասնաշենք) հանգստյան տան մասնաշենքի ***տանիքի,***

ջրամատակարարման, կոյուղու և ջեռուցման համակարգի վերանորոգման աշխատանքներ: Վերոհիշյալ պայմանագրի ծավալաթերթ-նախահաշվով նախատեսվել են ***տանիքի կառուցման և վերանորոգման, էլեկտրական լուսավորության*** և մի շարք այլ աշխատանքներ: Պայմանագրի ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված տանիքի շինարարական աշխատանքները, ՀՀ կառավարության 02.02.2002թ. «Հայաստանի Հանրապետությունում շինարարության թույլտվության և քանդման թույլտվության կարգը հաստատելու մասին» N 91 որոշմամբ հաստատված «ՀՀ շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման, տարածքների բարեկարգման և այլ ցածր ռիսկայնության աստիճանի դասակարգում ունեցող օբյեկտների (շինարարական աշխատանքների), որոնց կատարման համար շինարարության թույլտվություն չի պահանջվում» ցանկի համաձայն, համարվում են շենքերի (բնակելի, հասարակական, արտադրական նշանակության) շինարարական աշխատանքներ:

Գտնում ենք, որ անհիմն է պատվիրատուի այն պնդումը, որ «Բիդեք» ՍՊԸ-ի կողմից թիվ 3.1 հավելվածում ներկայացրված տանիքի, ջրամատակարարման, կոյուղու և ջեռուցման համակարգի վերանորոգման աշխատանքների պայմանագիրը չի հանդիսանում բնակելի, հասարակական, արտադրական ոլորտի շինարարության աշխատանքների իրականացման պայմանագիր, քանի որ ըստ վկայակոչված կառավարության որոշման՝ տանիքի մասով իրականացված աշխատանքները հանդիսանում են շենքերի (բնակելի, հասարակական, արտադրական նշանակության) շինարարական աշխատանքներ:

Այսպիսով, գտնում ենք, որ «Բիդեք» ՍՊԸ-ն ներկայացրել է համանման (բնակելի, հասարակական, արտադրական և էներգետիկ ոլորտում շինարարական աշխատանքների իրականացումը) երկու պայմանագիրը, որոնց շրջանակներում կատարված աշխատանքների հանրագումարային ծավալը գումարային արտահայտությամբ պակաս չէ Ընթացակարգի շրջանակներում Ընկերության ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից 2013թ. դեկտեմբերի 24-ին կնքված կապալային աշխատանքների (տանիքի, ջրամատակարարման, կոյուղու և ջեռուցման համակարգի վերանորոգման աշխատանքներ) գնման թիվ «ՀԵՀ-ԲԸՀԱՇՁԲ-13/1» պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պակաս չէ Ընթացակարգի շրջանակներում Ընկերության ներկայացրած գնային առաջարկի երեսուն տոկոսից:

Ուստի Պատվիրատուն, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.04.2015թ. ժամը 09:30-ին կայացած նիստի թիվ 1 արձանագրության 1-ին կետի 1.4 ենթակետով «Բիդեք» ՍՊԸ-ի կողմից «Մասնագիտական փորձառություն» չափանիշը չպահպանելու, Հրավերի 2.2.4 կետի պահանջը խախտելու հիմնավորմամբ թիվ 1 արձանագրության 1-ին կետի 1.6 ենթակետով Ընկերության կողմից ներկայացված հայտը մերժելով՝ խախտել է Օրենքի 31-րդ հոդվածով և Կարգի 85-րդ կետով սահմանված պահանջները, քանի որ Ընկերության կողմից ներկայացվել է հայտը ներկայացնելու տարվա և դրան նոխորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացված Հրավերով պահանջվող համանման /նմանատիպ/ պայմանագրեր:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Բիդեք» ՍՊԸ-ի 06.05.2015թ. ներկայացրած բողոքը բավարարել՝ դադարեցնել «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.04.2015թ. թիվ 1 արձանագրության 1-ին կետով «Բիդեք» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝ Հ.Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-13/15 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ռ.Մկրտչյան